ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՅԱՆ

ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ԲՆԱԿԵՑՈՒՄԸ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍԵՖՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ (XVI-XVII ԴԴ.)

Բանալի բառեր՝ *Հյուսիսարևելյան Հայաստան, էթնոժողովրդագրություն, թյուրքական ցեղ, Օսմանյան կայսրություն, Սեֆյան Իրան, Լենկ Թեմուր, ղզլբաշ, տեղահանություն, Տավուշ:*

Մեծ Հայքի Գուգարք աշխարհը, ինչպես նաև Ուտիքի ու Արցախի վերնագավառները կազմում են աշխարհագրական այն միջավայրը, որն ընդհանրական անվամբ սովորաբար կոչվում է Հյուսիսարևելյան Հայաստան: Վերջինիս էթնոժողովրդագրական պատկերի վերհանման, այնտեղ զանազան օտար ցեղերի ներթափանցման, բնակեցման ու տեղաբաշխվածության խնդիրները գիտական մանրազնին քննության չեն ենթարկվել: Ճիշտ է, Հյուսիս-արևելյան Հայաստանում ազգաբնակչության *կազմի մեջ փոփոխությունները սկսվել են դեռևս XI դարում՝ թյուրքական ցանազան ցեղերի ներթափանցման հետևանքով և շարունակվել մոնղոլների, ինչպես նաև կարա-կոյունլու ու ակ-կոյունլու թուրքմենական պետությունների տիրապետության ժամանակաշրջանում, սակայն, վճռորոշը XVI-XVII դդ. ժամանակահատվածն է: Դրանից ելնելով անդրադառնանք Սեֆյանների օրոք Մեծ Հայքի Գուգարք նահանգի հյուսիսարևելյան գավառներում, ինչպես նաև Ուտիքի ու Արցախի վերին գավառներում թյուրքական ցեղերի վերաբնակեցմանը:*

XVI դ. Հայաստանը ենթարկվում է մահմեդական երկու խոշոր պետությունների՝ Օսմանյան կայսրությանը ու Սեֆյան Իրանին: Ի տարբերություն առաջինի, որն արդեն գտնվում էր իր հզորության գագաթնակետին, Սեֆյան Իրանը ձևավորվեց XVI դ. սկզբում: Երբ Լենկ Թեմուրը մեծ ավարով ու գերիների անթիվ բազմությամբ վերադառնում էր Փոքր Ասիայից, ցանկացավ հանդիպել շեյխ Սեֆիին, որը հյուսիսային Ատրպատականի Արդաբիլ քաղաքում գործող՝ շիա մուսուլմանական հայտնի միաբանության/հոսանքի առաջնորդն էր: Լենկ Թեմուրը

շեյխ Սեֆիի սրբակեցությամբ ու իմաստնությամբ խիստ տպավորված՝ ցանկացավ որևէ ընծա տալ նրան: Ի վերջո Սեֆին խնդրեց, որ Լենկ Թեմուրն ազատի գերիների այն բազմությանը, որոնց բերում էր Փոքր Ասիայից: Հենց այս գերիները, որոնք թյուրքական զանազան ցեղեր էին, հետագայում դարձան Սեֆյան Իրանի հիմնական զինյալ ուժը[1]: Լենկ Թեմուրը նաև զգալի արտոնություններ շնորհեց Արդաբիլին, մասնավորապես ազատելով մի շարք հարկերից[2]: Սեֆյանների հիմնական հենարանը դարձան թյուրքական քոչվոր ցեղերը, որոնք հետագայում ստացան ղզլբաշ անվանումը:[3] Այս ցեղերի մի մասն ուներ բուն օղուզական ծագում, իսկ մյուսը մասը սերում էր միջինասիական թյուրքերից: Հետագայում Սեֆյանների գերիշխանության տակ անցան նաև զանազան քոչվոր ցեղեր, որոնք ևս հիշատակվում են ղզլբաշ անվամբ: Օսմանյան կայսրության հետ երկարամյա պատերազմները Սեֆյան շահերին ստիպում էին ավելի ուշադիր լինել իրենց տերության հպատակների նկատմամբ: Իսմայիլ շահի (1502-1524) հաջորդները, հատկապես Թահմասպ I շահը (1524-1576), կարևորում էին դավանական գործոնը՝ համոզված լինելով, որ ընդունելով շիայականություն/ շիա ուղղությունը, պետության հյուսիսային շրջաններում տեղաբախշված ցեղերն ավելի օգտակար ու վստահելի կլինեն թուրքական զորքերի դեմ պատերազմներում[4]: Սկզբնական շրջանում ղզլբաշ ցեղերի ազդեցությունը շատ մեծ էր, սակայն Շահ Աբաս I-ի (1587-1629) բարեփոխումներից հետո իրավիճակը փոխվեց: Աստիճանաբար Սեֆյանների տերության մեջ սկսում է ավելի ընդլայնվել պարսկական տարրի ազդեցությունը: Շահ Աբասի օրոք միայն սահմանային շրջաններում էր հանդուրժվում ղզլբաշ ցեղապետերի իշխանությունը[5]:

Սեֆյանների հսկայածավալ պետության մեջ հայկական տարածքները հիմնականում ներառված էին Երևանի, Ղարաբաղի, Շիրվանի ու Թավրիզի բեկլարբեկություններում: Բեկլարբեկության գլուխ կանգնած էին բեկլարբեկերը: Հյուսիսարևելյան Հայաստանի մի քանի գավառներ էլ մտնում էին Քարթլի-Կախեթի վրացական թագավորության մեջ: Բեկլարբեկեր նշանակվում էին առավելապես

---

1 **Լեո**, *Հայոց պատմություն*, հ. 3, Երևան, 1946, էջ 43:

2 **Iskander beg Monshi**, *History of Shah Abbas the Great*, vol. 1, Boulder, Colorado, 1930, p. 28.

3 **И. П. Петрушевский**, *Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв.*, Ленинград 1949, с. 68.

4 **А. А. Рахмани**, «*Тарих-и алам арай-и Аббаси» как источник по истории Азербайджана*, Баку, 1960, с. 43.

5 **И. Петрушевский**, указ. соч., с. 81.

ղզլբաշական ցեղերի տարբեր ճյուղերի ներկայացուցիչներ։ Նրանց ձեռքում էր կենտրոնացված բեկլարբեկության ռազմական ու վարչական ամբողջ իշխանությունը։ Բեկլարբեկերը նշանակումից հետո սովորաբար իրենց ամբողջ ցեղախմբով հաստատվում էին իրենց ենթակա տարածքում՝ իսկական պատուհաս դառնալով հայ բնակչության համար։ Այսպես, օրինակ, Թահմասպ I-ը էմիր Շահվերդի սուլթան Զիյադօղլուին, որը ղաջարների ցեղից էր, նշանակում է Ղարաբաղի բեկլարբեկ։ Հետագա տարիներին ղաջարների ցեղապետերը հակասություններ ունեցան շահերի հետ, որից հետո նրանց մի մասը տեղափոխվեց Շիրվան, իսկ մի մասն էլ մնալով Ղարաբաղում՝ թուրքական արշավանքների ժամանակ տեղափոխվեց Արդաբիլ։ Սակայն մի քանի տարի անց Շահ Աբասը ղաջարներին կրկին վերադարձրեց Ղարաբաղի էյալեթ և նրանց ցեղապետերին կրկին բեկլարբեկ դարձրեց[6]։ Այս կամ այն տարածքում նշանակված բեկլարբեկն իր հետ այդտեղ հաստատում էր նաև վասալ մի շարք մանր ցեղախմբերի, ինչն էլ հետագայում նրանց համար դառնում էր ամուր հենարան[7]։

Հայկական բնակավայրերում Սեֆյանների օրոք հաստատված թյուրքական ցեղերից ամենամեծը վերոնշյալ ղաջարական ցեղն էր։ Ի. Շոպենի հաղորդած տվյալների համաձայն՝ այդ ցեղը մոնղոլական հորդաների կազմում ներխուժել է Փոքր Ասիա[8]։ Այնուհետև նրանք բնակություն են հաստատել Սիրիայի տարածքում, ապա Լենկ Թեմուրի կողմից բնակեցվել Պարսկաստանում։ Շահ Աբասի օրոք նրանք բաժանվում են երեք մասի։ Նրանց մի մասին Աբասը բնակեցնում է Գանձակում, մյուս մասին՝ Մերվում, իսկ մի հատվածին՝ Մազանդարանում[9]։ Նրանց Գանձակում հաստատելով՝ շահն իր պետության հյուսիսային սահմանը ամրապնդում էր լեզգիների հարձակումներից, ինչպես նաև հզոր հակակշիռ էր ստեղծում վրացական կիսանկախ թագավորության համար։ Այս ցեղախումբը խիստ ազդեցիկ էր։ Ուստի այն բաժանելով և տարբեր վայրերում բնակեցնելով՝ խորամանկ տիրակալը նաև լուծում էր ներքին խնդիր, որովհետև այդ ցեղախումբը քանիցս մասնակցել էր գահակալական կռիվներին։ Պատահական չէ նաև, որ հետագայում իշխանությունն ուժով գրաված և 1796 թ. շահ հռչակված Աղա Մահմադ խանը ղաջարների ցեղից էր։

XVI դ. վերջում Կուրի հովտում հաստատվել էր ղազախլու-ղազախ թյուր-

---

6 **Iskander Munshi**, op. cit., p. 390.

7 **И. Петрушевский**, указ. соч., с. 126.

8 **Шопен И.**, *Исторический памятник состояния Армянской Области, в эпоху ее присоединения к Российской империи*, Санкт Петербург, 1852, с. 531.

9 Նույն տեղում։

քական ցեղը: Այս մասին առաջին տեղեկությունները հայտնում է Իսկանդեր Մունշին: Երբ 1588 թ. Վրաստանն ասպատակելուց հետո Թուրքերը Ֆարհադ փաշայի հրամանատարությամբ իրար հետևից սկսում են գրավել Սեֆյանների տիրույթները, ղազախլու ցեղը մնում է այստեղ: Նրանք չեն հետևում այն ցեղերի[10] օրինակին, որոնք ժամանակավորապես հեռանում են: Ղազախլու ցեղի առաջնորդ Նազար սուլթան Ղազախլուն ընդունում է Թուրքերի գերիշխանությունը[11]: Այնուհետև Ֆարհադ փաշան որոշ ժամանակ կանգ է առնում այստեղ և ձեռնարկում Գանձակի ամրոցի կառուցումը: Կարճ ժամանակ անց, երբ Շահ Աբասը կրկին այս տարածքները վերանվաճում է, ղազախլու ցեղի առաջնորդն ընդունում է պարսկական գերիշխանություն: Ավելին, 1605 թ. նրա որդի Շամս-ադ-դին խանը Շահ Աբասից ստանում է խանական տիտղոս, ինչպես նաև՝ կալվածքներ Շիրվանում[12]: Այսպիսով, մերթընդմերթ տիրափոխ լինելով՝ ղազախլու ցեղը կարողանում է ավելի շատ տարածքներ զբաղեցնել: Հետագա տարիների գրավոր հիշատակարաններում ու սկզբնաղբյուրներում Աղստևի ստորին հովտի մեծագույն մասը հիշատակվում է Ղազախ ձևով, ինչը կապված էր այդ ցեղի անվան հետ: Հատկանշական է, որ Շահ Աբասը առանձնակի դաժանությամբ էր վարվում սուննի մահմեդականների հետ: Առաքել Դավրիժեցին՝ մանրամասն ներկայացնելով շահի նվաճումները, հաղորդում է, որ երբ Գանձակը գրավվեց Թուրքերից, այնտեղ բնակվող սուննի մահմեդական չեկիրլու ցեղն ամբողջությամբ կոտորվեց[13]:

XVII դ. ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ Ժան Շարդենը, որը ուղևորվում էր Թիֆլիսից դեպի Պարսկաստան, անցնելով հայկական բնակավայրերով, բավական ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև Հայաստանի հյուսիսարևելյան շրջանների բնակչության վերաբերյալ: Մանրամասն նկարագրելով Թիֆլիս-Երևան երթուղին նա նշում է. «4-րդ օրը կեսօրին մենք հասանք մի բնակավայրի, որն ուներ 300 տուն, այն կոչվում էր Դելիջան... Այն տեղակայված է Աղստև գետի մոտ, բարձր և սարսափելի լեռան լանջին, որը պատկանում էր այն լեռնաշղթային, որը մենք անցնում էինք նախորդ օրերից... Կան գյուղեր, որոնք տեղակայված են այնպիսի բարձր լեռների վրա, որ ճամփորդը դժվարությամբ

---

10 Խոսքը վերաբերվում է դաջար, քարամանլու, բայաթ և այլ ցեղերին, որոնք վերադարձան Իրան: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **И. Петрушевский**, указ. соч., с. 134.

11 **Iskander Munshi**, op. cit., p. 583.

12 Նույն տեղում, էջ 907:

13 **Առաքել Դաւրիժեցի**, *Գիրք պատմութեանց*, աշխատասիրությամբ *Լ. Ա. Խանլարյանի*, Երևան, 1990 էջ 113:

կարող է նկատել դրանք. Դելիջան վայրը և նրա ողջ շրջակայքը 6 մղոն հեռավորությամբ պատկանում են Ղամշի խանին և կոչվում են Ղազախ երկիր: Այն գտնվում է Պարսկաստանից այնպիսի կախման մեջ, ինչպես և Վրաստանը, այսինքն մշտապես կառավարվում է տեղական ծագմամբ սեփական իշխանի կողմից, որն անցնում է ժառանգաբար: Աբբաս Մեծը նվաճել է այս երկրները Վրաստանի հետ միաժամանակ»[14]*:*

Ադրբեջանական պատմագիտության մեջ հետզհետե գերակշռող է դառնում այն տեսակետը, համաձայն որի՝ ղազախլու ցեղն այստեղ հաստատվել է դեռևս VII դարից սկսած: Ադրբեջանական որոշ հեղինակներ այս ցեղի նախնիներ են համարում ղփչաղներին[15]*: Սակայն հայ և օտար սկզբնաղբյուրները նման պնդման որևէ հիմք չեն տալիս: Ավելին՝ Իսկանդեր Մունշին, իր աշխատության մեջ հիշատակելով ղզլբաշական ցեղերն ըստ հերթականության, 14-րդ տեղում նշում է ղազախլու ցեղը: Ուստի նման տեսակետը մտացածին է և վերոնշյալ տարածքներում ադրբեջանական էթնիկ տարրի առկայությունը հին ժամանակներ տանելու նպատակ է հետապնդում:*

Թյուրքական ցեղերի բնակեցման հաջորդ տարածքը Գուգարքի Լոռու հատվածն էր: 1628 թ. որպես Լոռու տեր հիշատակվում է արդեն մեզ ծանոթ Շամսադ-դին խան ղազախլուն[16]*: Վերջինիս ստացած առատ պարգևներից կարելի է եզրակացնել, որ նա բավական ակտիվ դերակատարում է ունեցել այդ շրջանի բնակավայրերի յուրացման և նվաճման գործում:*

Ինչպես վկայում է XVIII դ. վրաց պատմագիր Վախուշտի Բագրատիոնը, այս շրջաններն էլ զերծ չմնացին մահմեդական տարրի վերաբնակեցումից[17]*: Վախուշտին նշում է. «Եվ այնուհետև, երբ Շահ Աբբասը խլեց այն (խոսքը վերաբերում է Լոռուն և Դեբեդ գետի հովտին- Ա. Ե.) 85-րդ արքա Գեորգիից*[18]*, նա բերեց և այստեղ բնակեցրեց բորչալու ժողովրդին և դրանից երկիրը սկսեց կոչվել Բոր-*

---

14 **Жан Шарден**, *Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг.*, Тифлись, 1902, с. 237-238.

15 **Гейбуллаев Г. А.**, *Топономия Азербайджана*, Баку, 1986, с. 25.

16 **И. Петрушевский**, указ. соч., с. 142.

17 **Вахушти Багратион**, *География Грузии*, Тифлись, 1904, с. 32.

18 Վախուշտիի, ինչպես նաև վրացական մյուս աղբյուրների տեղեկություններին, որոնք վերաբերվում են հյուսիս-արևելյան Հայաստանի տարածքներին, պետք է որոշակի վերապահումներով մոտենալ: Նրանք իրենց աշխատություններում այդ տարածքները համարում են վրացական հողեր:

չալու»[19]: Աբրահամ Կրետացին, այս դեպքերից ավելի քան մեկ դար անց ներկայացնելով Մուղանի ժողովի մասնակից ցեղապետերին ու խաներին, որպես Լոռու տեր հիշատակում է Քելեպ-Հուսեյն խանին[20]:

Այս տարածքները, որոնք մինչ այդ Վրաստանի կազմի մեջ էին, 1604 թ. Շահ Աբբասն առանձնացնում է և ենթակա դարձնում Գանձակի բեկլարբեկությանը[21]: Այսպիսով, Աբասը շարունակում էր հայկական տարածքներում թյուրքական ցեղերի բնակեցման իր քաղաքականությունը: Հետագա դարերում, ինչպես նշում է Հ. Ամիրջանյանը, Լոռին ու Բորչալուն տարածքային առումով հաճախ համընկնում էին: Բուն Լոռին կազմում էր արդեն ի հայտ եկած աշխարհագրական նոր տեղանվան՝ Բորչալուի[22] հարավային մասը[23]:

Թյուրքական ցեղերի բնակեցման մյուս տարածքը Զակամի շրջանն ու Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Տավուշ գավառն էին: Ղզլբաշական զուլքադար ցեղի շամսադդինլու ճյուղը դեռևս Իսմայիլ I շահի օրոք հաստատվում է Գանձակից հարավ ընկած հարթավայրային շրջաններում[24]: 1605 թ. նրա ցեղապետ Ալիսուլթան Շամսադդինլուն ընդարձակ կալվածքներ է ստանում Շահ Աբասից: Հետագայում, երբ Սեֆյան զորքը օսմանցիներից գրավում է Ախալցխա ամրոցը, Ալիսուլթանի հաջորդ Սելիմ-խան Շամսադդինլուն տեր է դառնում նաև այդ ամրոցին[25]:

Հյուսիսարևելյան Հայաստանում թյուրքական ցեղերի բնակեցումը ծանր հետևանքներ ունեցավ տեղի հայ բնակչության համար: Բնակավայրերն ու եկեղեցիներն ավերվում են, իսկ բնակչությունը ստրկության է մատնվում: Այս ամենին գումարվում են սովն ու համաճարակը[26]: Բացի այդ, հայկական բնակավայրերի հարևանությամբ հետզհետե առաջանում էին քոչվոր ցեղերի բնակատեղիները: Հայկական մի շարք տեղանուններ ու բնակավայրեր սկսում են հետզհետե ստանալ օտարահունչ անուններ: Այս տեղանունները սկսում են կոչվել նաև նոր բնակ-

---

19 Նույն տեղում, էջ 32:

20 **Աբրահամ Կրետացի**, *Պատմություն*, Երևան, 1973, էջ 62:

21 **Ամիրջանյան Հ.**, *Լոռին XVIII դարի վերջին և XIX դարի առաջին երեսնամյակին*, Երևան, 2010, էջ 20:

22 Բորչալու գավառի աշխարհագրական սահմանների մասին ավելի մանրամասն տե՛ս **Լալայեան Ե.**, «Բորչալուի գաւառ. Յառաջաբան. Տեղագրութիւն», *Ազգագրական հանդէս*, 1901, N 7-8, էջ 271-302:

23 **Ամիրջանյան Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 5:

24 **И. Петрушевский**, указ. соч., с. 135.

25 Նույն տեղում:

26 **Հովհաննես Ծարեցի**, *Աղուանից աշխարհի պատմությունը*, Երևան, 1978, էջ 474:

վող քոչվոր ցեղերի անուններով. օրինակ՝ Շամշադին, Բորչալու, Ղազախ և այլն:

Նորամուտ քոչվոր ցեղերը սկզբնական շրջանում հաստատվում են Կուրի հովտային շրջաններում: Տեղաբնիկ հայկական բնակչությունը հարկադրված հետզհետե տեղաշարժվում է դեպի լեռնային ու նախալեռնային շրջաններ: Սակայն ամռան ամիսներին քոչվորներն իրենց հոտերը քշում էին դեպի այդ շրջաններ:

Թուրքերն ու պարսիկները, գրավելով հայկական բնակավայրերը, տեղի բնակչությանը հաճախ գերեվարում ու տանում էին իրենց երկրի խորքերը: Տարածաշրջանի էթնոժողովրդագրական պատկերի փոփոխմանը նպաստում էր նաև հայերի հարկադրական կրոնափոխությունը՝ իսլամացումը: XVII դ. Կեսերին գրված իր *հիշատակարանում* ձեռագրի գրիչ Եսային *խոսում է հայերի կրոնական հալածանքների մասին: Նա նշում է. «ի թուականիս Հայոց ՌՂԴ (1645), ի հայրապետութեան տեառն Գրիգորի, ընդ հովանեաւ Ս. Նահատակիս, ի յերկրիս Տայուշ, ի գեաւղս, որ կոչի Թաւուզ, յորում ամի և ըստ մեղաց մերոց բռնացաւ անաւրէնութեան չարիք ի վերայ մեր ի հենէ Պարսից, լուծ ծառայութեան նոցա հարկանելով և տանջելով ստիպեն դարձուցանել ի մոլոր յաւրենս իւրեանց»*[27]*:*

Այսպիսով հյուսիսարևելյան շրջաններում թյուրքական ցեղերի բնակեցումը բազմաթիվ առումներով աղետալի հետևանքներ ունեցավ տեղի հայության համար:

ANDRANIK YESAYAN

THE SETTLEMENT OF TURKIC TRIBES IN NORTHESTERN ARMENIA IN THE SEFEVID PERIOD (XVI-XVII)

Key words: demography, Ottoman Empire, Iran, Tamerlan, kizilbash, deportation, Tavush.

In northeastern Armenia, the demographic picture significantly changed since the 16th century, when the region was settled by different nomadic tribes. This policy was carried out by the Ottoman Empire and Sefevid Iran, whose goal was to have strong support of their rule in Armenia. The new inhabitants changed not only the demography and the religious structure of the region but also the Ar-

---

27 *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.),* հ. Բ, կազմեցին՝ ***Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան,*** Երևան, 1978 էջ 181:

menian toponyms. The muslimization of Armenians and their deportation to the Ottoman Empire and Sefevid Iran also played a major role in the demographic changes in northeastern Armenia. After the devastation of those Armenian territories, various tribes replaced the local inhabitants. At first they settled near the River Kur, while the Armenians moved to the mountains, but later on the nomads also occupied the mountainous territories for pasturing their livestock in summer.

АНДРАНИК ЕСАЯН

ЗАСЕЛЕНИЕ СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ ТЮРКСКИМИ ПЛЕМЕНАМИ В В ПЕРИОД СЕФЕВИДОВ (XVI-XVII)

Ключевые слова: этнодемография, Османская Империя, Сефевидский Иран, бекларбекство, Тамерлан, кызылбаш, депортация.

В северо-восточной Армении демографическая картина сильно изменилась начиная с 16-го века, когда в регионе появились различные кочевые племена. Важную роль сыграли Османская Империя и Сефевидская Персия, которые переселяли в Армению разные племена, чтобы иметь здесь прочную опору для своей власти. Под влиянием новых племен изменилась не только демографическая и религиозная картина, но также армянские топонимы стали заменяться турецкими и персидскими; большая часть их сохранилась до сих пор. В изменении демографии важную роль играло вероотступничество населения и переселение армян в Османскую Империю и Сефевидскую Персию. После опустошения армянских территорий там стали селиться различные племена. Поначалу они селились у реки Кура, а здешние армяне уходили в горы, но затем и горные регионы были захвачены кочевниками для выгона скота в летнее время.